

ԴԵՌԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՇ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Մեծ հայրենականի տարիներին հայ գրողների ստեղծագործություններում տիրապետող դարձավ հայրենասիրության, անձնագոհության, նվիրվածության թեման: Հայրենական պատերազմի տարիներին ինչ ժանրերով էլ որ ստեղծագործել են հայ գրողները, նրանց հիմնական նպատակն է եղել խորացնել հայ ժողովրդի ատելությունը ֆաշիզմի նկատմամբ, բորբոքել հայրենասիրության ու ազատասիրության կրակը: Պատերազմի պայմանները սովետահայ գրողներին թելադրեցին ավելի շատ զբաղվել հրապարակախոսությամբ:

Հայ գրողներին մտահոգում էր ժողովրդի, հայրենիքի, մարդու ու մարդկության բախտը, Անկախ ընտրած թեմայից ու պատկերած ժամանակաշրջանից, նրանց ընդհանուր նպատակը մեկն էր՝ նպատակը ֆաշիզմի արագ և վերջնական ջախջախմանը, խաղաղության վերականգնմանն ու ժողովուրդների եղբայրությանը:

Հայրենական պատերազմի տարիներին Դ. Դեմիրճյանի հայրենասիրությունը դրսևորվեց ամբողջ ուժով ու խորությամբ, ուժգին ցասումով նա արտահայտվեց մարդկության ոխերիմ թշնամու՝ գերմանական ֆաշիզմի դեմ: Ելնելով ժողովուրդների կյանքի փորձից՝ Դեմիրճյանն իր ելույթներում, հողվածներում հաստատապես հայտնում է այն միտքը, որ ֆաշիզմը պետք է խորտակվի, և մարդկությունը վաղ թե ուշ կունենա երջանիկ ապագա:

Գրողը հայրենաշունչ ելույթներով հանդես էր գալիս ժողովրդի առաջ, ըորամասերում: Նա կոչ էր անում լարել բոլոր ուժերը, պաշտպանել մեր հայրենիքը և մեր աշատությունը: Ե՛վ իբրև հասարակական գործիչ ու գրող, և՛ իբրև հրապարակախոս, հայ իրականության մեջ Աբովյանից ու Նալբանդյանից հետո Թումանյանի ու Իսահակյանի հետ Դեմիրճյանը շարունակել ու զարգացրել է հայ-ռուս բարեկամության գաղափարը, որը ձևավորվել ու հասունացել էր դեռևս նախորդ դարերում:

Պատերազմը հեղաշրջում մտցրեց գրական կյանքում: Բոլորը զինվորագրվում էին, մեկնում ռազմաճակատ: Զինվորների կողքին գրողն էր, լրագրողը: Շուրջ հիսուս հայ բանաստեղծ, արձակագիր ու գրականագետ զինվորի շինել հագած մեկնեցին ռազմաճակատ:

1941 թվականից պատերազմը դառնում է Դեմիրճյանի ստեղծագործության հիմնական թեման, նրա ակնարկներն ու հողվածները օգնում էին համայն մարդկության փրկության ու խաղաղության համար մղվող պայքարին: Նրա ելույթներում երևում էր մեծ քաղաքացին և կրթող հրապարակախոսը:

Դեմիրճյանին մտահոգում էր իր ժողովրդի ու հայրենիքի, մարդու և մարդկության բանտը: Գրողը կոչում էր գրով, Ֆադեևի խոսքերով ասած, խաղաղությունը փաթաթում էր պատերազմի հրձիգների վզին:

Դեմիրճյանի մեջ վիթխարի ուժ կար, կրակ ու ցասում: Նրա հրապարակախոսական հողվածները, ռադիոելույթները ուղղակի լիցքավորում էին հայ մարտիկներին, նրանց մղում հերոսական գործերի: Նրա գրիչը դրվատում էր հայրենի սրբազան հողը, աշխատավոր ժողովրդի քրտինքով ստեղծված բարիքները: Ահա մի հատված նրա 1941 թ. հոկտեմբերի 25-ի ռադիոելույթից. «Մենք հաղթող ժողովուրդ ենք, բայց, շնայած դրան, դարձյալ մենք ենք, որ չենք ցանկանում պատերազմ»:

Սովետական ժողովուրդը իր կյանքը կապել է արդար աշխատանքի հետ: Խաղաղությունը

սովետական ժողովրդի կենսական պայմանն է, անհրաժեշտությունը: Դրա համար էլ, երբ սովետական ժողովուրդը խաղաղության կոչ է անում, ամբողջ աշխարհը հավատում է նրա անկեղծությանը:

Կարիք չկա պերճախոս հոետոր լինել սովահար հնդիկին համոզելու, որ նա հաց պիտի ուտի: Կարիք չկա մայրերին բռնադատել, որ նրանք ցանկանան իրենց պալականների ողջությունը: Կարիք չկա խրամատներում ստառոջ բանվորին ու գյուղացուն քարոզներ կարդալ, թե օգտակար է տանը նստել՝ վառարանի մոտ, շրջապատված ընտանիքի անդամներով, կամ աշխատել գործարանում, դաշտում:

Խաղաղությունը պարզ հասկացողություն է, ինչպես հացը, ջուրը, օդը, առողջությունը¹: Գրող-հրապարակախոսը ընդգծում էր, որ Սովետական Միությունը ամբողջ աշխարհին առաջնորդում է դեպի խաղաղություն: Մեր պարտականությունն է, ասում էր նա, հաղթանակով նվաճել խաղաղությունը, ոչ միայն մեր, այլև բոլոր ժողովուրդների համար: «Իսկ դրա համար մենք կշարունակենք խաղաղության աշխատանքը»:

Հայրենական պատերազմի տարիների Դեմիքճյանի հրապարակախոսական հոդվածներում և կրթող ելույթներում մերկացվում է հիտլերյան բռնակալության գործեակերկրվը: Գրողը դիմում էր հազարավոր ընթերցողներին, բանակի մարտիկներին, կոչ անում կռվել հանուն հայրենիքի, հանուն հաղթանակի, հանուն խաղաղության: Ռազմաճակատային խրամատներում, հոսպիտալներում, գործարաններում, ֆաբրիկաներում, կոլտնտեսային դաշտերում մարդիկ խոր հուզմունքով էին կարդում Դեմիքճյանի ռազմաճակատային ակնարկները, հոդվածները, որոնք պարբերաբար տպագրվում էին թերթերում: Նա խորությամբ ու բազմակողմանիորեն արտացոլեց բարդ ու լարված ժամանակների հոգեբանական մթնոլորտը, սովետական մարդկանց քաղաքացիական, հայրենասիրական մեծ վերելքը, պայքարի անսասան կամքը:

Գրական երկերի հետ միասին Դեմիքճյանն ստեղծեց բազմաթիվ հրապարակախոսական բարձրարժեք հոդվածներ: Հանրապետական շրջանային, ռազմաճակատային թերթում նա հաճախ էր փառաբանում ֆաշիզմի դեմ մարտնչող հայ ռազմիկների հերոսությունը, հայրենի հողին նվիրված մարդկանց անձնազոհ արարքները: Լավագույն օրինակներից էր «Արարատյան հովտում» հրապարակախոսական հոդվածը, որը տպագրվեց 1942 թ. նոյեմբերի 22-ի «Պրավդայում»:

Երևանի մտավորականության² ֆաշիզմի դեմ ուղղված միտինգում վախճանն անց գրողը հայտարարում էր. «Ես ինձ մարտիկ եմ զգում և չեմ զլանա մեր հայրենիքի ազատության համար թափելու արյանս վերջին կաթիլը»³:

1941 թ. օգոստոսի 25-ին «Պրավդա» թերթը գրել է. «Հայ ժողովուրդը մեր երկրի վրա կախված մահացու վտանգը առավել ևս խորություն է ընկալեց, որովհետև նա իր բազմադարյան պատմության ընթացքում բազմիցս ենթարկվել է օտար բռնակալների արշավանքներին: Նա գիտեր, թե ինչ բան են ջարդերը, կոտորածները, սովը, բռնությունը: Ուստի, երբ արյունալի հրդեհով բռնեց Սովետական Միության դեմ մարդակեր Հիտլերի սկսած պատերազմը, ամբողջ հայ ժողովուրդը մեկ մարդու նման ոտքի ելավ պաշտպանելու հայրենիքը...»:

Հայ ժողովրդի մասին «Պրավդայի» հայտնած մտքերի շարունակությունը եղավ Դ. Դեմիքճյանի «Հայրենական պատերազմ» նշանավոր հոդվածը, որը տպագրվեց «Գրական թերթում»: Հանդես բերելով պատմական իրադարձությունների և ժամանակաշրջանի ճիշտ ըմբռնում՝ անվանի գրողը տալիս է սովետական ժողովրդի արդարացի Հայրենական պատերազմի ճշմարիտ բնութագրումը: «Մեր կառավարությունը ֆաշիզմի գրոհի դեմ հայտարարեց Հայրենական պատերազմ: Ի՞նչ է դրա խորհուրդը:

Դա այն պատերազմն է, երբ ժողովուրդն ինքն է կամենում մղել առանց թելադրության և քարոզի: Դա այն պատերազմն է, երբ «դանակը հասնում է ոսկորին»: Եվ ժողովուրդը օրհասական կռվի է ելնում փրկելու իր սրբազան հողը, երկիրը, ազատությունը»⁴,— գրում էր Դեմիքճյանը պատերազմի առաջին տազնապալի օրերին:

Դեմիքճյանի խոսքերը խփում են ուղիղ նպատակին: Ընթերցողը ամբողջ էությունով իրեն զգում է հայրենիքի, ժողովրդի ազատության համար մարտնչող զինվոր և հավատով է լցվում հաղթանակի նկատմամբ: «Ճաշիղմը մեր դեմ հանել է իր պողպատներն ու օդին, իսկ

¹ Հայաստանի պետական կենտրոնական արխիվ, ռադիոյի գրական հաղորդումների նյութերը, № 180:

² ԳԱԹ, Դեմիքճյանի արխիվ, գր. ֆոնդ № 974:

³ «Գրական թերթ», 1941 թ., № 32:

մենք դրա դեմ հանում ենք մեր պողպատներն ու ոգին»,—գրում է Դեմիրճյանը:

Պատերազմական տարիների դեմիրճյանական հրապարակախոսութանը ամենից ավելի բնորոշ է խոր հայրենասիրական ոգեշունչ բովանդակությունը՝ ֆաշիզմի խարազանում, հաղթող ժողովրդի հերոսության փառաբանում:

«Խոհեր կինոֆիլմի առաջ» հողվածք, որը տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթի 1942 թ. № 67-ում, վերաբերում է «Գերմանական զորքերի ջախջախումը Մոսկվայի տակ» փաստավավերագրական ֆիլմին: Էկրանի վրա երևում են պատերազմական Մոսկվայի փողոցները, հրապարակները, շենքերը: Մոսկվայի մատույցներում գերմանական «անհաղթելի» բանակը ուժեղ հակահարված ստացավ: Պատերազմի առաջին ծանր ամիսներից հետո սովետական ժողովուրդը ճաշակեց հաղթության բերկրանքը:

Ռազմաճակատում սկսվել է շրջադարձը, ավելի է ամրանում հաղթանակի համոզմունքը: Եվ Դեմիրճյանը հետաքրքիր ընդհանրացում է անում. «Այս պատերազմը հարված հասցրեց ամենից առաջ գերմանական ժողովրդի բարոյական կարողություններին և գեղեցկայրեց սովետական ժողովրդի նկարագիրը: Մեր պատերազմը դարձավ հերոսների դրամա, նոր ժողովրդական էպոս: Մեր մարդիկ սիրում են այս պատերազմը»:

«Զարագործությունների գիտական սիստեմ» հողվածում Դեմիրճյանը նկարագրում է գերմանացիների հրեշավոր գազանությունները. «Ռա սարսափեցնելու, հոգեպես ընկճելու, բարոյական ոչնչացնելու սիստեմ է: Ահաբեկման միջոցով կոտրել հակառակորդ երկրների դիմադրության թափը, կովելու կամքը: Տիրել, ստրկացնել, շահագործել»: Ահա սա է զարգացած երկրի «գիտական սիստեմը», երկիր, որը հիվանդացել է «դարչնագույն կատաղությանը: Բայց կա պատժող ձեռքը, որը չի թողնի «անպատիժ կծոտելու ողջ» մարդկությանը և վարակելու նրան»⁴:

Դեմիրճյանի պատերազմական-հայրենասիրական հրապարակախոսության մեջ հատկապես առանձնանում են երկու հողվածներ, որոնք իրենց գաղափարական բովանդակությամբ մի գիծ են կազմում և կարծես մի ստեղծագործության երկու մասեր լինեն: Դրանք են՝ «Հայ հերոսական ժողովուրդը» և «Տարեմուտի խորհրդածությունները»: Առաջինը գրել է 1943-ին, երկրորդը՝ 1945-ին, երբ Սովետական Միությունը պատերազմում էր արդեն Եվրոպայի ազատագրության համար, և ֆաշիզմը վերջին դիմադրության հուսահատ ճիգն էր անում:

«Հայ հերոսական ժողովուրդը» հողվածում նա նշում է, որ հայ ժողովուրդը աշխարհի հին, քաղաքակրթված ժողովուրդներից մեկն է՝ համառ և անվհատ մարտնչող իր մշակույթի, ինքնուրույնության և հայրենիքի համար: Դեմիրճյանը հավաստում էր, որ հայ ժողովուրդը «խորապես գիտակցեց պատմական վայրկյանի բախտորոշ էությունը՝ իր «ի՛նչ և չի՛նչու հարցը» ու, եղբայրական ժողովուրդների հետ ուս-ուսի՛ ոտքի ելավ «անձնվիրաբար կովելու հայրենի նվիրական հողերի համար, պաշտպանելու համար մեր մեծ կուլտուրան և համամարդկային իդեալները»: «Տարեմուտի խորհրդածությունները», որը տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթի 1945 թ. հունվարի 1-ի համարում: «Ինչու՞ ըլպարտվեցինք 1941-ին»,— հարցնում է Դեմիրճյանը:—Սովետական մարդկանց համար մի բան անընդունելի է, անհասկանալի, անթույլատրելի՝ պարտությունը: Մենք իրավունք չունենք, մեզ չի կարելի պարտվել: Նորից հրապարակախոսը ընդգծում է, որ ժողովուրդը չի կարող պարտվել, հատկապես այն ժողովուրդը, որի երկիրը աշխարհի առաջավոր մարդկության փայտալյաժ երազն ու հույան է:

Պատերազմական օրերին մամուլում տպագրվել են Դեմիրճյանի «Տապալվեց ոճիրների միջնաբերդը», «Մենք հաղթեցինք» և մի շարք ուրիշ հողվածներ: «Բեռլինը ընկավ... Ինչե՞ր չի կատարում կաթակնալից Կարմիր Բանակը: Մենք լցվում ենք նոր ուժով, մենք աճում ենք օրեցօր, մեր արշավը դառնում է ահազնադողող, սասանեցնող, ֆաշիզմի համար մահացու: Մենք հաղթեցինք և միշտ կհաղթենք: Ընկավ ու տապալվեց գազանության, տմարդության միջնաբերդը, ոճիրների դավադրավայրը, բռնակալության սիմվոլը: Ընկավ ու տապալվեց Բեռլինը և կտապալվի ֆաշիզմը, որպեսզի բարձրանա մարդկությունը»⁵,—այսպես էր հնչում հրապարակախոսի ձայնը պատերազմի ավարտից հետո:

Պատերազմի տարիներին Դեմիրճյանը բազմիցս անմիջական հանդիպումներ է ունեցել տարբեր խավերի հետ, անցկացրել զրույցներ, զբաղվել ազդեցիկ «կենդանի, անմիջական խոսքով ասել այն, ինչ զգում էր, անհրաժեշտ համարում: 1944 թ. դեկտեմբերի 8-ին «Սովետական ռազմիկ» թերթում տպագրվում է հայ գրողների «Ողջունի նամակը»՝ ուղղված բանակի մարտիկներին: Ահա ինչ է գրում Դ. Դեմիրճյանը հայ մարտիկների մասին. «Այնքան բազմաթիվ են Հայրենական պատերազմի ռազմաճակատներում և թիկունքներում հերոսացած հայ տղա-

⁴ ԳԱԹ, Դեմիրճյանի արխիվ, գործ № 983:

⁵ ԳԱԹ, Դեմիրճյանի արխիվ, № 975:

մարդկանց և կանանց անունները և մեկը մյուսից այնքան գերազանց, որ մենք դժվարանում ենք անգամ երևակայությամբ պատկերացնել: Մեզ մնում է, որ հայ գրականությունը, որ լի է ազատություն և մարդասիրություն գաղափարներով, բարձրանա ձեր հերոսության աստիճանին և հավասարվի ձեր փառքին»⁶:

Այնուհետև գրողն իր երախտագիտության խոսքն է ասում ուս և սովետական մյուս ժողովուրդների այն մարտիկներին, որոնց անօրինակ սխրագործությունների շնորհիվ գերմանական ջարդարարները չհասան Հայաստան և «սովետական տարիների ընթացքում վերաշինված մեր հայրենիքը չդարձավ իր զավակների արյամբ ողողված ավերակույտեր, ինչպես այդ միշտ եղել է անցյալ պատերազմների ժամանակ»:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Գ. Դեմիրճյանը գրում է նաև երգիծական մի քանի հողվածներ հակաֆաշիստական թեմայով: Հաջողված օրինակ է գրողի «Նոր ֆաշիստական աշխարհագրություն և պատմություն» երգիծական գրվածքը: Գրող-հրապարակախոսը ինչպես այս, այնպես էլ մյուս երգիծական հողվածներում բացահայտում, մերկացնում էր ֆաշիզմի հակամարդկային քաղաքականությունը, ծաղրում էր թշնամուն, նրա թուլությունները և դրանով իսկ ինքնավստահություն հաղորդում սովետական մարդուն, որ նրա գործը արդար է, հաղթանակը նրանը կլինի:

1945 թվականին, հատկապես մեծ հաղթանակից հետո Դեմիրճյան-հրապարակախոսին հետաքրքրում է մի ուրիշ հարց: Պատերազմի ավարտը առաջադեմ ուժերի հաղթանակով նորից քաղաքական ասպարեզ բարձրացրեց հայկական հարցը: Դաժան ճակատագրի բերումով տարագիր եղած հայությունը ցանկություն հայտնեց միանալ Սովետական Հայաստանին: Ահա սա էլ դարձավ Գ. Դեմիրճյանին առավել հուզող հարցերից մեկը: «Արդարության ձայնը» հողվածում հեղինակը նշում է, որ հայ ժողովրդի անջատված մասը վերջապես հնարավորություն է ստանում միանալու մայր հայրենիքին: Բազմաթիվ մարդիկ, որոնք դարձել էին «Հունաստանի հայեր», «Ամերիկայի հայեր», «Եգիպտոսի հայեր», «Հաբեշտանի հայեր», անդուլ թափառումներից հետո կկարողանան կոչվել «հայեր»:

Գ. Դեմիրճյանը երախտագիտությամբ է խոսում ուս և մեծ ժողովրդի մասին, որը երկու անգամ փրկել է մեր հայրենիքը անխուսափելի կործանումից, և մայր-հայրենիքի անունից հայտարարում. «Գրկաբաց կրնդունենք մեր եղբայրներին և նրանց հետ միասին կանցնենք մեր պատմական, ազնիվ ու վեհ գործին՝ կյանքի շինարարության, աշխատանքի և ստեղծագործության»:

Հայրենական պատերազմի տարիներին Գ. Դեմիրճյանի գրած հողվածներում ու գրական ակնարկներում հաստատվում էր մեր ժողովրդի անցած պատմության նկարագիրը: Նրա հրապարակախոսությունը և զեղարվեստական երկերը շնչում էին հայրենասիրության ոգով և լրացնում էին իրար:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո էլ ժողովրդի ստեղծագործ աշխատանքն իր արժանի արտացոլումը գտավ Դեմիրճյանի հրապարակախոսական հողվածներում: Դեմիրճյանը թողեց հրապարակախոսական հարուստ ժառանգություն, որը բլուրավոր թելերով կապված է արդիականության ու ապագայի հետ:

Ր. Գ. ДАВТЯН—Публицистика Дереника Демирчяна в годы Великой Отечественной войны.—Автор рассматривает статьи, радиовыступления классика армянской советской литературы—Д. Демирчяна, в которых он клеймил позором фашистских варваров, прославлял мужество и отвагу советских воинов, выражал глубокую веру советского народа на победу над фашизмом.

⁶ «Սովետական ռազմիկ», 1944, № 80: